

Շիրվանզադե Ավետիք Արասխանյանց

Չարմանալի է բնության քմահաճույքը: Երբեմն մարդուն պարզևելով բարձրագույն արժանավորություններ, տալիս է նրան մի որևէ տարօրինակ հատկություն, որ խանգարում է մարդուն իր բնածին ձիրքերը գործադրելու կյանքի մեջ:

Ավետիք Արասխանյանցը կլիներ մի շատ խոշոր և գուցե բացառիկ դեմք ռուսահայերի հասարակաբան կամ գրական կյանքում, եթե չունենար ի բնե մի շատ Փոքրիկ, շատ չնչին թերություն, որ սակայն ողբերգական դեր կատարեց նրա համար: Ի՞նչ էր այդ թերությունը, ես դժվարանում եմ որոշել մի խոսքով: Առօրյա լեզվով նրան կարելի է անվանել մանրակրկտություն կամ ճշտամոլություն, որը կամենաք:

Ավետիք Արասխանյանցը ճշմարտության մեջ ճշմարտություն փնտրելու մոլի սերն ուներ: Պարզ իրողությունը նրան չէր գոհացնում: Գտնելով արմատը, նա կանգ չէր առնում, այլ աշխատում էր գիտնալ չկա արդյոք նրա տակ մի ավելի խոր արմատ:

Այդ ճշմարտությունը գուցե Արասխանյանցին ծառայեր իբրև արժանավորություն, եթե չհասներ ծիծաղելի չափազանցության: Արասխանյանցը մանրակրկիտ էր ամենաչնչին բաների վերաբերմամբ նույնչափ, որչափ լուրջ հասարակական խնդիրներում:

Անեկդոտ պիտի թվա ձեզ, ինչ որ ասեմ այս առիթով այդ տարօրինակ մարդու մասին: Եթե մեկը Արասխանյանցի մոտ ասեր, օրինակ, «Ես նիստերին եղել եմ հինգ-տասն անգամ», նա անպատճառ պիտի հակաճառեր, «Եղբայր, հնգի և տասի մեջ կա վեց, յոթ, ութ, ինը, քանի՞ անգամ եք եղել նիստերին: Եթե դուք ասեիք. «Իմ կարծիքով, այդ հրապարակի վրա կլինի տասը հազար մարդ», Արասխանյանցն անպատճառ պիտի դիմադրեր. «Եղբայր, ձեր կարծիքը մի կողմ դրեք, պետք է իսկական թիվը գիտնալ»:

Մի անգամ նա մի մեծ ժողովրդական միտինգում սկսում է ամբոխի շուրջը պտտիլ իր քայլերը համրելով:

— Այդ ի՞նչ եք անում, պարոն Արասխանյանց, — հարցնում է նրա հետ միտինգի եկած մի անձ:

— Ուզում եմ գիտնալ, որքան մարդ կա այս միտինգում, — պատասխանում է նա ամենայն լրջությամբ:

Մի ուրիշ անգամ նա Թիֆլիսի ամենաբազմամարդ մի, փողոցի վրա իր ուղեկցի հետ վիճում է ինչ-որ տարածության վրա և իր ասածն ապացուցելու համար սկսում է փողոցի մի որոջ տարածությունը իր ձեռնափայտով չափել: Անցորդները կանգ են առնում, նայում են տարօրինակ մարդուն:

— Երևի խելագար է, — ասում են իրանց գլուխը տարակուսանքով շարժելով:

Դուք տեսնո՞ւմ եք որքան չնչին, որքան աննշան է Ավետիք Արասխանյանցի այս մոլությունը: Բայց նա, այդ չնչին բանը մարդու կյանքում կատարեց ճակատագրային դեր: Նա Արասխանյանցին դարձրեց ծիծաղելի: Այո, նրան ծաղրում էին ամենքը, և՛ մեծերը, և՛ փոքրերը, և՛ իր աշակերտները, և՛ մարդիկ, որ չարժեին նրա կոշիկների կոճակները կապելու պատվին:

Ծաղրը չարությունների երեխան է, իսկ երեխաները ամենաչար եակներն են: Նրանք անցորդի վրա արձակում են ձյունի կամ ցեխի գնդակներ և չեն զղջում, այլ, փախչելով հեռու ծիծաղում ու բրբջում են:

Արասխանյանցին ոչ ոք չէր ատում, և դա վատագույն բանն էր նրա համար, վասնզի ատում կամ սիրում են զորեղներին: Բայց նրան չէին էլ արհամարհում, վասնզի ոչ ոք նրան ոչնչություն չէր համարում: Նրան միայն ծաղրում էին ամենքն ու ամենուրեք, և դա էր սոսկալին: Հարկավ, նա ևս ուներ հարգողների մի խումբ, բայց այդ խումբն այնքան փոքրաթիվ էր, նրա ծայնը այնքան տկար էր, որ խլանում էր ամբոխի հռիռոցի մեջ, սակայն այդ ապաբախտ մարդն ուներ խոշոր արժանավորություններ: Ռուսահայ կյանքի ճգնաժամին նա մեծ ծառայություն է մատուցել հայ գրականությանը: Նա էր միայն, որ կարողացավ հայակեր իշխան Գոլիցինի օրերին իրավունք ստանալ մի լուրջ գրական-գիտական ամսագիր հրատարակելու:

«Մուրճ» էր այդ ամսագրի անունը: Այժմ նա այլևս գոյություն չունի, բայց նրա կատարած դերը պիտի որոշ էջ բռնե հայ գրականության պատմության մեջ: «Մուրճ»-ն էր, որ ընթերցողների լայն շրջանները ծանոթացրեց Հովհաննես Թումանյանցի և Ավետիք Իսահակյանցի և Շանթի հետ: Ի միջի այլոց այնտեղ են տպվել իմ «Արսեն Դիմաքսյան»-ը և «Արտիստը»:

Ես հարգում էի Ավետիք Արասխանյանցին խորապես և՛ իբրև մարդու, և՛ իբրև հասարակական գործիչի: Անապական շիտակություն ուներ այդ մարդը, անկաշառ և անաչառ էր վերին աստիճանի, նաև ծայրահեղ անշահասեր:

Իբրև հրապարակախոս նա ամբողջ գլխով բարձր էր իր ժամանակակիցներից: Ճշմարիտ է, նա չուներ Գրիգոր Արծրունու ավյունը, բայց մտքով ավելի խորն էր նրանից: Թեև մանրակրկիտ, բայց միշտ հետաքրքրական վերլուծող էր:

Մինչ Արծրունին խնդիրները քննում էր մակերևութաբար, Արասխանյանցը միշտ ձգտում էր նրանց խորը թափանցել: Նա ոչ մի թեզ չէր պաշտպանում առանց կրկնակի, եռակի փաստերի: Նրա միակ թերությունը լեզվի ճապաղությունն էր: Նա գիտեր գրել գեղեցիկ: Նա ամբողջովին կլանված էր ճշմարտությամբ: Գրական ձևը խորթ բան էր նրա վերլուծող գրչի համար: Իր մտավոր զարգացմամբ նա Արծրունուց հարուստ էր: Գերմանիայում էր նա ավարտել իր բարձրագույն կրթությունը և իր մտածելու եղանակով գերմանացի էր:

Նա ավելի գիտնական էր, քան հրապարակախոս: Վիռելի էր նրա աշխատասիրությունը: Օրվա մեջ նա պարապում էր ոչ պակաս քան 12 երբեմն մինչև 16 ժամ: Մի օր ես նրա մոտ տեսա Կարլ Մարքսի «Կապիտալ»-ի թարգմանությունը բնագրից: Մի գործ, որ ամեն մարդու բանը չէ: Մի ուրիշ օր նա ինձ ցույց տվեց մի հոյակապ ձեռագիր: **Հայկական Էնսիքլոպեդիա** էր դա, չեմ հիշում մինչև որ տառը հասցրած:

Այդ մարդը, եթե Եվրոպայում ծնվեր, կլիներ մի հայտնի գիտնական: Այդպես էր կազմված նրա գլուխը, որ լեցուն էր գիտական պաշարով:

Գրիգոր Արծրունին շարունակ ծաղրում էր Ավետիք Արասխանյանցին իր ֆելիետոններում, չնայելով, որ նա իր լավագույն աշխատակիցներից մեկն էր եղել երկար ժամանակ: Նա չէր կարողանում սիրել Արասխանյանցի առաջին հոդվածը «Մուրճ»-ի մեջ, ուր հեղինակն ասել էր, ի միջի այլոց, «Մշակ»-ը ունեցել է իր փայլուն վայրկյանները»: Ինչպես մարսեր Արծրունին մի այդպիսի հանդգնություն իր նախկին աշխատակցի կողմից:

«Մուրճ»-ը չուներ ոչ բավականաչափ բաժանորդներ և ոչ մի ուրիշ նյութական աղբյուր, և Արասխանյանցը կատարյալ մարտիրոսությամբ էր հրատարակում նրան, զրկելով իրան և իր ընտանիքը կյանքի տարրական պիտույքներից: Եվ դարձյալ հալածվում էր այդ մարդը, մի կողմից Արծրունու, մյուս կողմից Հովհաննիսյանի ծաղրից:

Ընկերական կյանքում Արասխանյանցը բարեհամբույր և հաճելի էր, կիրթ լինելով, նա զուսպ էր վեճերի և վիճաբանությունների մեջ և երբեք թույլ չէր տալիս իրան հակառակորդի անձնավորությունը վիրավորելու, նույնիսկ այն ժամանակ, երբ նրան վիրավորում էին:

— Պարոն, այդպես չէ, պարոն, սխալվում եք — ահա նրա սովորական ընդդիմադրությունը հակառակորդին:

Մի անգամ ես նրան տեսա իր հավասարակշռությունը կորցրած և բորբոքված: Վիճում էր Ալեքսանդր Քալանթարի հետ, որ Արծրունուց հետո «Մշակ»-ի խմբագիրն էր: Այդ մարդն էլ Արասխանյանցի չափ չափավոր վիճաբանող էր: Այս անգամ երկուսն էլ կատաղեցին և իրարու հասցեին արտասանեցին հայհոյանքներ, որ երբեք չէի լսել ոչ մեկի և ոչ մյուսի բերանից:

— Այ տղա, զոկերը գժվել են, — ասաց Ղազարոս Աղայանցը և, մեջ ընկնելով, կռվողներին բաժանեց իր հսկա ձեռներով:

Արասխանյանցը շատ էր վազում ժողովրդականության ետևից: Իբրև ամբոխի հոգեբանությունը լավ չուսումնասիրած մեկը, նա չգիտեր, որ ժողովրդականությունը այն քմահաճ հարճն է, որին որքան շոյես, այնքան հեռու կփախչի քեզնից:

Ընտանեկան կյանքում Ավետիք Արասխանյանցը դժբախտ էր: Նա ծնված էր լավ ամուսին և լավ հայր լինելու, չունեցավ իր արժանավոր վիճակը ընտանեկան հարկի տակ:

Իր կյանքի վերջին տարիներում նա հոգեպես ընկճվել էր անճանաչելի լինելու չափ: Այն մարդը, որին մենք վերագրում էինք երկաթե կամք, դարձել էր անզոր պատանի իր անհատական դժբախտության լուծի տակ:

Հասարակությունը գրեթե մոռացել էր նրան այն օրից, երբ իր «Մուրճ»-ը ստիպվեց վաճառել ուրիշներին: Նա սկսել էր պարապել գիտություններով, բայց այլևս ուշ էր, նրա ճակատագիրը որոշված էր արդեն:

Մեր վերջին հանդիպումն ուղղակի ողբերգական էր:

Նա եկել էր ինձ մոտ մնաս բարև ասելու: Հրավիրված էր Ալեքսանդրապոլ ուսուցչի պաշտոնով մի միջնակարգ դպրոցում:

Նկարագրելով իր վիճակը, այդ մոտ վաթսուևամյա ծերունին լաց եղավ երեխայի պես, կարծես մարդը նախազգաց իր մահը:

— Էհ, գուցե այլևս չտեսնվինք, — ասաց նա և, համբուրելով ինձ, հեռացավ:

Նա ճաշակեց հայ գրական վաստակավորներին վիճակված բոլոր դառնությունները և մասնակից չեղավ նրա փոքրիկ ուրախություններին: